

ՈՒՂԵԳՐԱԿԱՆ

ՆԱԽՆԵԱՅ ՀԵՏՔԵՐՈՎ, ՆԵՐԿԱՅԻ ՇՈՒՆՉՈՎ

Անծանօթ տարածք...

Կ'ընթանանք յառաջ:

Անծանօթ մըն է ինքնաշարժի վարորդն ալ:

Վանայ լիճը եզերող կպրապատ ուղին ու շրջապատող ցից լեռները համերաշխ չեն իրարու. հարթ, սահուն, ողորկ, սե՛ւ կպրուղին անձեռագործ լեռնաշխարհի անհարթ, խնդրունդ մակերեսը շառտած, անոր աւիշը ծած, նշտարի հարուած է գոյացող կեղ մըն է աչքիս, որու հայեացքը միւս կողմէ Աղթամարն ու Առտէրը կը սեւեռէ հեռուն: Տասնամեակ մը առաջ այցելեր ու վայելեր էի. թէեւ կարելի չէ յղփանալ իրմով՝ Աղթամարով, յագենալ Մանուէլ ճարտարապետի հանճարի այս արտայայտութեամբ, յափրանալ Գագիկ Բ Արծրունի արքայի այս ստեղծագործութեամբ, տեսնել Քրիստոսի, Ադամի ու Եւայի, Դաւիթի ու Գողիաթի, Երից մանկանց, Արծրունի իշխաններու ու իշխանուհիներու, կենդանիներու անօրինակ քանդակները, քարակերտ զարդանախշերը, առաքելոց ու մարգարէից որմնանկարները եւ լիանալ անոնցմով, յագուրդ ստանալ: Զանոնք անգամ մը տեսնող աչքը դարձեալ ու դարձեալ կ'ուզէ նայիլ անոնց, ըմբռնել փափաքելով նաեւ կղզիի բնութիւնը, ծովու կապոյտը, ջուրի թանձրութիւնը: Սակայն նոր յայտնաբերումներու ետեւէ ենք այս անգամուն եւ կը բաւականանանք ցամաքէն ընթանալու պահուն դիտելով կղզին, փորձելով յիշողութեամբ վերակազմել անոր պատկերն ու մեր տասնամեակ մը առաջ ունեցած տպաւորութիւնը վերգգալ:

Կ'ընթանանք դէպի Կարմրակայ Ս. Աստուածածնայ վանքը: Արուեստաբան առաջնորդս, որ ազնիւ երիտասարդ մըն է, թուրք ըլլալը ընդգծելու կարիքը կը զգայ՝ «թո՛ւրք եմ» կ'ըսէ: Եթէ թուրք է, ուրեմն քուրդ չէ, որովհետեւ Վանի ու շրջակայքի ժողովուրդը ճնշող մեծամասնութեամբ քուրդ է:



Կարմրակայ Ս. Աստուածածնայ վանք

Կարճ ժամանակ մը անհրաժեշտ էր հասկնալու համար իր այս խոստովանութեան արժէքը: Թուրք ըլլալ ազգային ինքնութեան մը պատկանելէ աւելի՝ հանրագրութեան մը ստորագրողը ըլլալ կը նշանակէ. այսինքն մէկը, որ ունի տեսնելու, ընկալելու, տեղեկանալու, հետաքրքրութեան, միաժամանակ սակայն շտեմնելու, չընկալելու, չգիտնալու, չհետաքրքրուելու որոշ վիճակներ: Թրքութիւն կրողը շատ լաւ գիտէ հանրային գնահատանքի արտայայտութիւններն ու տուգանքի միջոցները: Գնահատանք եւ առանձնաշնորհում, որ կը մատուցուի երբ ենթական կ'ընթանայ առանց հպելու քաղաքականօրէն արգիլեալ նիւթերու: Այս կանոնը ներքնացուցած քաղաքացի մը կրնայ դիւրութեամբ աշխատանք գտնել, հանրային կեանքի տարբեր ոլորտներու մէջ դիրքը ամրապնդել, բարձրացում ստանալ, կարգավիճակ շահիլ ու հանգստաւէտ կեանք մը ապահովել: Միայն թէ տակնուվրայ չընէ պետութեան որոշած հպարդելքները, հեռու մնայ քննադատական հայեացքով մը զանոնք մեկնաբանելէ, չփորձէ զգացմունքային մերձաւորութիւն մը մշակել անոնց հանդէպ, որոնցմէ կարելոր բաժին մը կը վերաբերի հայերու անցեալի գոյութեան, մշակութային արժէքներուն, ցեղասպանութեան: Առաջնորդս թէեւ թուրք ազգութեամբ, սակայն մերժած է ստորագրել թրքութեան պայմանները ճշդող այս վերացական հանրագրութիւնը: Արուեստաբան ըլլալուն, իր մասնագիտական հետաքրքրութեան կեդրոնին դրած է իր ծննդավայր Վանի եւ շրջակայքի հայկական պատմական վանքերը, եկեղեցիները, մշակութային արժէքները: Գիտէ անոնց ճիշդ վայրը, ունի պատմական տեղեկութիւն բոլորի մասին, ճարտարապետական վերլուծումի կ'ենթարկէ անոնց կառուցուածքը, կը նշէ մէկը միւսէն զանազանող այս կամ այն առանձնատկութիւնը, հայերէն չգիտնալուն՝ գիտցողները կը հարցուփորձէ՝ նոր տեղեկութիւններ ամբարելու համար:

Թուրք ըլլալով հանդերձ թրքութենէ հեռու մնալը յաւելեալ ջանք կը պահանջէ եւ այս տղան կրցած էր խորտակել երկրի բնակչութեան մեծամասնութիւնը կաշկանդող աներեւոյթ ու անզգալի այդ երկաթեայ շղթաները՝ իր առջեւ բանալով նոր աշխարհի մը ճամբաները: Հետեւաբար, «քուրդ չեմ, թուրք եմ» արտայայտութիւնը, մանաւանդ զինք հետզհետէ աւելի լաւ ճանշնալէ ետք, կրկնակի արժէք ստացաւ:

Միջոց մը վերջ կ'պրապատ ուղիին հրաժեշտ տուած ենք արդէն եւ շեղելով դէպի լեռները՝ խրած անոնց մէջ: Մեր ինքնաշարժը մինչեւ տեղ մը կը բարձրացնէ մեզ. ա՛լ պէտք է իջնենք ինքնաշարժէն եւ քալենք զառիվեր ընթացող խճուղիէն: Մայիսի գոլ շունչը իջած է լեռներու վրայ. ձիւնապատ գագաթներէ փչող պաղուկ զեփիւռը կը շոյէ թարմ ու խոնաւ խոտերը: Պահ մը մեր անցած ճամբուն աչք մը նետելու համար ետ կը դառնամ. Արտոս լեռը իր փառայեղ վեհութեամբ դիմացս կը ցցուի յանկարծ: Ռշտունեաց գաւառի զիրար խաչաձեւող բլուրները եռանկիւնի մը կազմած են Վանայ լիճի հեռուէն երեւցող կապոյտին հետ: Քիչ մը եւս մագլցելէ ետք ահա մեր դիմաց կը կանգնի Կարմրակայ Ս. Աստուածածնայ վանքը:

Գրուած է, որ Գագիկ թագաւոր իր կնոջ հետ գարնան երեք ամիսները աղօթքով անցընելու կը փութար այստեղ: Յիրաւի, արքայավայել տեսարան ու իշխանական կլիմա ունի վայրը. վանքը հողէն ծլած բնածին ու հրաշակերտ ծաղիկ մըն է աւելի, քան ձեռակերտ շինուածք: Ձուլուած է տեղույն, եւ գեղադէտ աչքի մը երբեք խորթ չի թուիր անոր տեսքը: Վանքը Կարմրակ կոչուած է, «զի է անդ մասն ի կենաց փայտէն ամփոփեալ ի տփի եւ ի վերայ ակն կարմրագոյն»: Վանքին հին մէկ լուսանկարը տեսած եմ տեղ մը, զոր նկարած է Խաչիկ Գոռլեան, հայ բողոքական քահանան, որ իր իսկ վկայութեամբ շապիկ կը հագնէր ու դպրութիւն կ'ընէր Հայ Առաքելական եկեղեցւոյ

մէջ: Տաճարի՝ թրծուած աղիւսէ կառուցուած բարձր գմբէթը թէեւ կանգուն է, սակայն հսկայ ծակեր բացուած են վրան: Գանձախոյզները, որոնք անէծքի մը պէս զրկուած բուն գանձը տեսնելու կարողութենէն, ինկած կեղծ մամոնայի ետեւէ, խլուրդներու նըման փորած-փորփորած են եկեղեցւոյ ոչ միայն յատակը նաեւ պատերը:

Վանքին շուրջը քանի մը անգամ դառնալը, հոս-հոն ինկած խաչքարերու յիշատակարանները կարդալ փորձելը ինքզինքս զբաղեցնելու, նա՛եւ մխիթարելու միջոց մըն էր սոսկ: Գիտէի -եւ այս գիտնալը կը տառապեցնէր զիս-, որ հոն ընելիք մը չունիմ. շէն վանք մը ըլլար՝ մինչեւ ժամերգութիւն սպասէի թերեւս, վանահօր կամ ծերուկ վարդապետի մը հետ անցեալի մասին զրուցէի, թերեւս գիշեր մը հոն մնայի՝ ուխտս կատարեալ դարձնելու համար, ձեռագիր մատեաններ քրքրէի՝ նոր ուսումնասիրութեան մը համար... «Ա՛խ, ըլլայի՛ր ըլլայի՛ր...»:

Յամենալը անիմաստ ըլլալուն եւ պատմական վանք մը աւելի տեսնելու մղումով, ակամայ կը բաժնուիինք Կարմրակայ Ս. Աստուածածնայ վանքէն: Մինչեւ ինքնաշարժ զառիվար իջնելու ընթացքին հիացիկ կը դիտեմ Արտոս լեռան ձիւնածածկ գագաթը, որ կ'արտացոլայ Վանայ լճի ջինջ կապոյտին վրայ:

Ճամբան ենք նորէն: Կ'ընթանանք Վանայ լիճի հարաւային ափերէն: Պատմական Ռշտունիքի տարածքն է: Լիճը կը ծփայ հանդարտութեամբ. շրթունքներս ակամայ «շարժեցէ՛ք, զեփիւոք, ալիքը վէտ-վէտ», կը մըմնջան: Կ'երթանք դէպի **Գանձակայ Ս. Թովմասի վանքը**: Ինչպէս նախորդ անգամուն, հիմա ալ մինչեւ տեղ մը կ'ալողիկն գործածելէ ետք, կը շեղինք ձախ ու կը բարձրանանք հողէ ճամբայէն: Ինքնաշարժը կը ձգենք եւ քալելու կը սկսինք: Մեր ձախին գտնուող թումբի ետին հետզհետէ կը նկատուի տաճարի գմբէթը: Տպաւորիչ է բացուող տեսարանը. Վանայ լիճի ու երկնքի կապոյտի ենթագոյներուն ընդելուզուած, սրբատաշ քարերով կառուցուած վանքը...



Գանձակայ Ս. Թովմասի վանք

Դեռ նկատելի է վանքը շրջապատած պարիսպի մը գոյութիւնը, հեռուն կան քանի մը հին գերեզմանաքարեր, վրանին խաչեր նախշուած: Ուղղանկիւն գմբէթի բրգաձեւ կաթուղիկէն կիսով կանգուն է: Վասպուրականի հնագոյն վանքերէն է Ս. Թովմաս

առաքեալի ձօնուած այս կառոյցը, որու ստեղծման մասին պատմագիրները կ'աւանդեն հետեւեալ զրոյցը. Թովմաս առաքեալի աշակերտները սուրբին մարմինը նախ կը տանին Ասորեստան: Ժամանակ մը վերջ պարսից զօրքը կը յարձակի Ասորեստանի վրայ: Թովմաս առաքեալի նշխարները գետեղուած էին փայտեայ զարդարուն տապանի մը մէջ. Պարսից Ուսուֆ նախարարը տեսնելով զայն կը կարծէ, թէ գանձ մըն է: Իրիկունը իր սենեակը կ'առանձնանայ եւ բանալով տապանը, կը տեսնէ սուրբին մասունքները: Յուսախափ, սուրբին ոսկորները կը նետէ ձիերու սմբակներու տակ: Նոյն գիշերը, ծանր մղձաւանջներ կը խանգարեն քունը: Սարսափով կ'արթննայ եւ կը տեսնէ, որ բոլոր ոսկորները մոմերու նման կը վառին: Դողով ու վախով կը հաւաքէ զանոնք իր ծառաներուն հետ եւ դարձեալ կը դնէ փայտեայ տապանի մէջ: Վերջապէս առաքեալի նշխարները աստղի մը առաջնորդութեամբ կը բերէ ու կը թաղէ Ռշտունեաց գաւառի Պարծիս գիւղը, ուր կը կառուցեն եկեղեցի ու վանք:

Վանքը հին է, Վանայ լիճի եզրը («յեզր Վասպուրական ծովուն») ոսկեման շղթայի մը նման օղակող բազմաթիւ վանքերու հնագոյններէն... Վարանող քայլերով կը մտնեմ երբեմն «հրաշագարդ» կոչուած վանքի գաւիթը: Շրջակայ գիւղեր իրենց նախիրներու համար ախորի վերածած են զայն: Հոն մտնողը պատրաստ պէտք է ըլլայ ընդունելու մլուկներու, ոջիլներու այցելութիւնը: Եկեղեցւոյ յատակը խոռոչներով լեցուն է. մլուկները պիտի նախընտրէի քան գանձախոյզ աւազակները, որոնք անշուշտ պետութեան լոին համաձայնութեամբ, որ ամուր նեցուկն է իրենց աւերիչ աշխատանքին, կը խորտակեն, ի հիմանէ կը քանդեն տասնամեակներէ ի վեր անտէրութեան մատնուած այս կառոյցները: Խիստ նուազած, հազիւ քանի մը հատ մնացած հայկական հետքերը ջնջելու համար պետութիւնը թնդանօթի կամ հրացանի դիմելու պէտք չունի այլեւս. գանձախոյզները «պատշաճը» ի կատար կ'ածեն արդէն:

Ծովահայեաց քանի՞ տաճար ունինք արդեօք, կը մտածեմ ակամայ: Սեւանայ Ս. Առաքելոց եւ Մարգարանեաց վանքերը կը յիշեմ նախ: Մանկութիւնս անցած է Պոլսոյ Գնալը կղզիի բարձունքը թառած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ դարաւանդին, ուրկէ կը բացուէր Մարմարա ծովու եւ հոն հանգչող Իշխանաց կղզիներու գեղեցիկ տեսարանը: Կը մտաբերեմ Պոլսոյ միւս թաղերու՝ Սամաթիոյ Ս. Գէորգ, Ռումելի-հիսարի վոսփորահայեաց Ս. Սանդուխտ, Նաուրզաբուի Ս. Յովհաննէս Աւետարանիչ, Պիւլիւտէրէի Ս. Հռիփսիմէ եւ միւս եկեղեցիները, որոնք ծովու հետ մտերմիկ յարաբերութիւն մը ունեցած են հին ժամանակներէ ի վեր: Հապա Նարեկա՞յ վանքը, որ հոսկէ քանի մը քիլոմետր անդին ըլլալու էր: Աղթամա՞րը, Առտէ՞րը, Լիմի ու Կտուցի կղզիներու վանքէ՞րը, Եփրատը սեւեռող Հոռմկլա՞ն...

Մեր դիմաց տարածուող Վանայ լիճը հանդարտ է. տիրող լռութիւնն ու սաւանի նման փռուած լիճը Ս. Թովմասի անապատը կը պարուրեն խաղաղութեամբ: Պահ մը կը փորձեմ անտեսել վանքի աւերակ վիճակը, ազտն ու կեղտը, որոնց մէջ թաղուած է ան տասնամեակներէ ի վեր՝ առանց կորսնցնելու իր սկզբնական գեղեցկութիւնը, եւ կը սուզիմ խորքը պատմութեան, երթալով մինչեւ արշալոյսը ժԹ դարու, երբ նոյն եւ նման աւերածութեան շրջանէ մը ետք վերստին շէն մենաստանի մը վերածուած էր՝ ծերունագարդ, բայց ժրջան Յովհաննէս եպիսկոպոսի մը ջանքերով, Ս. Էջմիածնի Դաւիթ կաթողիկոսի օրհնութեամբ, «ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ յիշեալ սրբազան առաքելոյն»: Բնութեան անձեռակերտ մէկ անկիւնը թառած հրաշագարդ մենաստանի այս բարձունքը քանի՛-քանի՛ միաբաններու ու ուխտաւորներու ներշնչարանը եղած է, քուլայ-քուլայ երկինք բարձրացող խունկի ծուէններուն քանի՛-քանի՛ աղօթներ պլլուած

են ո՛վ գիտէ եւ հոսկէ լսուող հոգեպարար շարականներու աղու մեղեդիները արձագանգած են Ռշտունեաց լեռները: Ակամայ կը բաժնուինք Ս. Թովմասի վանքէն, աչքս միշտ ետեւն է. տարբեր դիրքերէ կը փորձեմ գրաւել տեսարանը, մինչեւ անյայտանալը...

Օրը կ'իրիկնանայ եւ արեւի շէկ շողերը կը ծածկեն Արտոսի գագաթը: Մենք ալ կը վերադառնանք Վան քաղաք, մեր պանդոկը, կազդուրուելու եւ պատրաստուելու յաջորդ օրուան:

Լիմ կղզի պիտի երթանք: Ճամբան երկար է. **Ս. Գէորգայ վանք** պիտի հասնինք նախ ինքնաշարժով՝ ցամաքէն եւ ապա մակոյկով՝ ծովէն: Գիտեմ Լիմ կղզին, դեռ մանկութեանս տեսած եմ իր աւերակ վանքին լուսանկարները, որոնք կը զարդարէին համայնքային պատի օրացոյցի մը էջերը: Առաջնորդս կը պատմէ, որ լիճի մերձակայ գիւղեր ամբողջ հայաբնակ եղած են անցեալին. հոն ուր փուշ ու տատասկ է այսօր՝ եղած են արգաւանդ այգիներ, պտղատու ծառաստաններ, որոնց դառն յուշը միայն կ'ապրի այլեւս... Երբ կղզիի հանդիպակաց նաւամատոյցը կը հասնինք, մակուկավարը կը շտապէ մեր քով: Աղթամարի ժողովրդականութիւնը չունի այս վանքը, այցելուներու թիւը շատ քիչ է, հետեւաբար փոխադրական կանոնաւոր ժամանակացոյց մը կամ մնայուն սակ մըն ալ չկայ: Բուռն սակարկութիւն մը կը կատարենք մերձակայ գիւղի բնակիչ մակուկավարի հետ, որ կարծես մտադիր է ամիսներու իր գործազրկութեան նիւթական կորուստը մեզմէ գանձելու, եւ վերջապէս համաձայնելով տրամաբանական գումարի մը շուրջ՝ կը բարձրանանք մակոյկ, որ քիչ ետք արդէն հանդարտ գնացքով մը կը սկսի ճեղքել լիճը, դէպի կղզի:



Լիմ կղզի

Նղանակը պայծառ է: Հեռուէն կը նկատենք սէգ Սիփանայ գագաթը: Նստած ցրուկին, աչքս չեմ հեռացներ հորիզոնէն:

Զբօսաշրջի՞կ, ուխտաւո՞ր, հայրենադա՞րձ... Այս դասական բառապաշարը վաղուց անձկացած է զիս եւ նմաններս տարազելու, իսկ մեզի պարտադրուած վիճակը՝ բառապաշարին անհրաժեշտ նոր երանգներ գոյացնելու աշխուժութենէն զրկուած է:

«Փառանգություն մեր դարձաւ յօտարություն, եւ բնակություն մեր ի նօղեհություն»։ Թերեւս սա՛ իսկ է վիճակը՝ նօսրացում հոն, ուր մեր խտութեամբ կը ծածկէինք երկիրը։ Ամէ՛ն իմաստով... Ներկայութեանս բնոյթին ճշգրիտ ածական մը պատշաճեցնելը ինքզինքս սփոփելու ճամբայ մը կը նկատեմ այդ պահուն, որովհետեւ համոզուած եմ որ ազնիւ ուղեկիցներէս բոլորովին տարբեր հարազատութեան աստիճան մը զիս կը կապէ այս տեղերուն։ Անոնք ալ գիտեն այս բանը եւ զիս առանձին ձգած են իմ մտածումներուս հետ։

Մեզ գիմաւորողները եղան ո՛չ թէ բուերն ու օձերը, որոնք խորհրդանշանները դարձած են անցեալի իրենց փառքէն մերկացած, անշքացած, աւերակուած վայրերու, այլ... ճայերը։ Ճայեր ո՛չ միայն թռչող մեր գլխուն վերը, այլ ճայեր մեր ոտքերու տակ ալ։ Մեծ ու պզտիկ, նորածին ու դեռ չծնած, չբացուած հաւկիթներ... Անմիջապէս մեր գլխուն վրայ թռչողներն ու մեզ վախ պատճառողները հաւանաբար անոնց մայրերն են, որոնք կարծես պիտի յարձակին մեզի, եթէ սխալմամբ կոխենք անոնցմէ մէկուն ու ջարդենք։ Բարեբախտաբար առանց փորձանքի հանդիպելու վերջապէս կը հասնինք եկեղեցւոյ աւերակներուն։

Աւանդութիւնը թէեւ կ'ըսէ, թէ վանքը հիմնադրուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէ, սակայն անոր առաջին յիշատակութիւնը կու գայ Ը դարէն։ Վանքը պայծառացնողը կ'ըլլայ Զաքարիա կաթողիկոս, որ «շինեաց ի կղզին որ Լիմն կոչի, զգեղեցիկ եւ զլուսազգեաց գումբեթաձեւ տաճար սրբոյն Գէորգայ զօրավարին եւ բազում սպասիւք զարդարեաց եւ տուն աղօթից շինեաց եւ զտեղի բնակութեան եւ դարպասս եւ բազում կրօնաւորս կարգեաց եւ հաստատեաց»։

Ս. Գէորգի մասունքով նուիրականացած տաճար կը մտնենք քարուքանդ եղած հիւսիսային պատէն ու կը յայտնուինք կիսաբոլոր ձեղուններ գոյացնող պայտածեւ կամարներով դարպասին մէջ։ Ճերմակ, սրբատաշ քարերու անօրինակ սպիտակութիւնը հակապատկեր մը կը կազմէ շուրջի տակնուվրայութեան ու հոգեւոր մռայլին հետ, որ հակառակ պայծառ եղանակին պատած է զիս։ Հին յիշատակարաններ կը պատմեն, որ այս գաւիթին մէջ եղած են խաչկալներ, անոր կից՝ մատուռ մը, աւանդատուներ, որոնցմէ ոչ մէկը կայ այսօր։ Հոս տեղ մը բարձրացած ըլլալու է նաեւ զանգակատունը, որու մնացորդն իսկ չէ մնացած։ Գմբէթազարդ մայր տաճարը խոնարհուած է ամբողջութեամբ։

ԺԶ դարու մատենագիր Ներսէս Վրդ. Մոկացի (1575-1625), որ իր մեծ պէսերուն պատճառով Բեղլու ալ կը կոչուէր, նկատուած է Լիմի անապատի երկրորդ հիմնադիրը, զայն վերանորոգողը։ Ան սնած էր Ամրտօլուի վանքին մէջ։ Տարբեր վայրեր շրջագայելէ ետք եկած հաստատուած էր Լիմ, զոր ծաղկեցուցած էր նոր աշակերտներով, որոնք յաջորդեցին ալ իրեն, ինչպէս՝ Ստեփանոս Շատախեցին, Մելքիսէթ Վժանեցին։ Դաւրիժեցի կը վկայէ. «Եւ ելեալ գնաց ի ի գաւառն Վասպուրականի եւ եմուտ ի կղզին Լմայ ի մէջ ծովուն եւ անդ ժողովեցան առ նա բազմութիւնք եղբարց եւ եղեւ անապատ հաստատուն ամենայն կարգօք եւ կրօնիւք միակեցութեան վարուց»։ Մոկացի Նրուսաղէմ ալ այցելած է եւ հոս գրած է իր յայտնի տաղը՝ «Վասն առման Նրուսաղէմի», ինչպէս նաեւ «Ի փոխումն Աստուածածնին»ը։ Ներսէս Մոկացի վախճանած ու թաղուած է Լիմի մէջ, սակայն կարելի չեղաւ յայտնաբերել գերեզմանը, զոր Լալայեանց տեսեր է ժամանակին ու կը գրէ, թէ ան «ահագին գերեզմանաքար» մըն էր։

Հայ եկեղեցականութեան ամենէն խստակեաց կրօնաւորներու այս կղզին, ուր

կիներու եւ անմօրուք պատանիներու մոտքն իսկ արգիլուած էր ատենին, այսօր փուշ ու տատասկներու եւ մոլախոտերու տակ ծածկուած աներակ մըն է, անոնց գերեզմանաքարերն իսկ փոշի եղած են: Պիտի ուզէի աւելի երկար մնալ այստեղ, ուր սաղմոսներու ութ կանոնները կ'արտասանուէին խստութեամբ, ուր միաբաններ ո՛չ թէ անկողնոյ մէջ, այլ գետինը, փսիաթի մը վրայ կը պառկէին՝ ջանալով ամենայն խստութեամբ պահել հին վանականներու օրէնքներն ու աւանդութիւնները: Պիտի ուզէի աւելի երկար մնալ, այսպէս շուտ մեկնիլը զայն լքելու պէս եղաւ, խիղճս հանգիստ չէ, սիրելի մը առանձին ձգեցի կարծես...

Կը շարունակենք մեր ճամբան դէպի հիւսիս-արեւելք՝ Վասպուրականի Առբերան գաւառի պատմական Բերկրի աւանը: Պէտք է անպայման տեսնենք **Տեառն Յոսկան որդւոյ Ս. Ստեփանոսի վանքը**: Վանայ լիճէն կը հեռանանք պահ մը ետք, մայրուղին մեզ դէպի Արարատ, դէպի արդի Հայաստան պիտի տանի, եթէ շարունակենք քանի մը ժամ եւս ընթանալ հոնկէ, սակայն կարճ ժամանակ մը անց կը թեքինք երկրորդական ճամբայ մը: Բերկրիի կամ Պանտումահի գետի հոսանքն ի վեր սկսած ենք ընթանալ արդէն: Կանաչապատ դաշտէն հատուած մը դէպի վեր կը վազէ ու կորսուելով կը փարի գորշ, ցից ժայռակոյտի մը մէջ: «... յահագնատեսիլ փապարս քարաժայռին մեծի շինեալ է մենաստանս յանուն սրբոյն Ստեփաննոսի որդւոյ տեառն Յոսկանն»: Վանքն ու քարաժայռը ընդելուզուած են կարծես, դժուար է մէկը միւսէն զանազանել: Աչքի խափկանքը կը չքանայ եկեղեցւոյ գմբէթը նշմարելու պահուն: Գմբէթակերպով, գողտրիկ մատուռ մըն է երեւցածը: Ինքնաշարժը կայանելէ ետք, կը սկսիմ մագլցիլ՝ հաս



Տ. Յոսկան որդւոյ Ս. Ստեփանոսի վանք

նելու ու ժամ առաջ տեսնելու համար անառիկ ժայռի մը կատարին թառած այս եզակի կառույցը:

Այսօր անշքացած ու գրեթէ աւերակի վերածուած վանքը, զոր Կիրակոս Գանձակեցի իսկ յիշատակած է իր պատմութեան մէջ, ունեցած է հարուստ անցեալ: Տ. Յուսկան որդւոյ վանքէն անդին, ժայռերու ետին կայ աւելի մեծը՝ Արգելան վանքը: Անծանօթ են այս վանքերու հիմնադրութեան պարագաները. գիտենք միայն, որ աւելի հին է Արգելանը, ուր իր կեանքը անցուցած է Ստեփանոս վարդապետ՝ որդի Տէր Յուսիկի:

«Յայսմաւորք» է կը սորվինք, որ Տ. Յուսիկ քահանայի երէցկիւնը թաթար զինւորներու կողմէ կը գերեվարուի ու կը տարուի Դաւրէժ, ուր կը վաճառուի քրիստոնեայ կնոջ մը: Յուսիկ քահանայի թախանձագին խնդրանքներուն ընդառաջելով, քրիստոնեայ կիւնը երէցկիւնը ազատ կ'արձակէ՝ այն պայմանով սակայն, որ երբ անոնք որդի մը ունենան ու ան քահանայ դառնայ, առաջին պատարագը մատուցէ դաւրիժեցի կնոջ մեղքերու թողութեան համար: Ի՛րապէս, կարճ ժամանակ անց անոնք կ'ունենան որդի, զոր կ'անուանակոչեն Ստեփանոս: Ան կ'ըլլայ «խոհեմ եւ իմաստուն, ժուժկալ եւ համբերող, ուսումնասէր եւ լուսկեաց, աշխատասէր եւ ողորմած»: Ստեփան օր մը տան համար աղացուած պարկ մը ալիւրը կը բաժնէ աղքատներու եւ պարկին մէջ աւազ լեցնելով կը բերէ տուն կը ձգէ եւ ինքն ալ կը փախչի Բերկրի, Արգելան վանքը: Մայրը սակայն ալիւր կը գտնէ պարկին մէջ: Ժամանակ մը վերջ տէր հայրն ու երէցկիւնը կ'անդրադառնան իրենց զակի բացակայութեան ու ճամբորդէ մը կը տեղեկանան, որ Բերկրիի կողմերն է: «Եւ յարուցեալ Տէր Յուսիկին, գնաց ի Բերկրի, եւ ի վանքն յԱրգելան եւ եգիտ զտղայսն»: Ան իր տղուն կը հարցնէ փախչելուն պատճառը: Ստեփանոս կը պատմէ կատարած բարեգործութիւնն ու հօր բարկութենէ խուսափելու համար ըրած հնարամտութիւնը: Տէր հայրը կը պատմէ եղած հրաշքը եւ կը յորդորէ վերադառնալ տուն եւ սփոփել իր վշտալի մայրը: Ստեփանոս կը պատասխանէ. «Ես յայս վանացս այլ ելանեմ, աստ կացից որքան եմ կենդանի եւ աստ մեռայց»: Ստեփանոս հոն քահանայ կը ձեռնադրուի, իր անդրանիկ պատարագին կը յիշէ դաւրիժեցի կիւնը, որու մասին պատմած էր իր տէր հայրը, կը դառնայ վարդապետ: Բարի ու առաքինասէր վարքով երկար տարիներ ապրելէ ետք, խաղաղութեամբ կ'աւանդէ իր հոգին Արգելան վանքի մէջ: Մահը կը պատահի 1291 թուականէն առաջ, քանի որ այդ թուականով թրւագրուած աւետարան մը գրուած է «ի սուրբ անապատս Արգելան ... ընդ հովանեաւ Յուսկան որդւոյ»:

Ստեփանոս վարդապետ կը թաղուի Արգելան վանքի մէջ, «ընդ հովանեաւ ամենասուրբ Աստուածածնի եւ սուրբ Կարապետի»: Կիրակոս Գանձակեցիի վկայութեամբ, այդ շրջանին լուսաւորներու պէս փալտող առաքինի ու լուսաւորեալ վարդապետներէն մէկն էր նաեւ «Ստեփանոս որդի Յուսկանն, այր սքանչելագործ եւ սուրբ, որ եւ գերեզման նորա յետ մահուան բժիշկ էր ամենայն ախտալոց»:

Տ. Յուսկան որդւոյ Ս. Ստեփանոսի վանքը մինչեւ ԺԹ դարավերջը կարելոր ուխտավայր մը եղած է, իսկ Ի դարավերջին ու ԻԱ դարասկիզբին վանքը լքուած էր ամբողջութեամբ: Եկեղեցւոյ կաթողիկէն թէեւ կանգուն է, սակայն ութանկիւն թմբուկի արեւմտեան մասը, հարաւային պատին պէս քանդուած է, արեւելեան պատը՝ նոյնպէս: Յատակը գանձախոյզներու յարձակումին ենթարկուած ըլլալով, ամբողջութեամբ ծակծկուած է: Շրջակայ ժայռերու վրայ դեռ կան ձեռակերտ խաչքարեր, իրենց յիշատակարաններով:

Արժէ Տ. Յուսկան որդւոյ վանք այցելել միայն գտնուած բարձրունքէն դիտելու համար Բերկրոյ դաշտը, որ բլուրի լանջերէն սկսեալ կ'երկարի մինչեւ Վանայ ծովը: Դաշտի մէջէն կը հոսի համանուն գետը: Մօտակայքին է Բերկրի յայտնի ջրվէժը: Վայր մը, որ կ'արդարացնէ հիներու այն խօսքը, թէ «Երկինքի վրայ դրախտ, երկրի վրայ Վան»:

Վանի հայկական յուշարձաններու նորոգութեան հետամուտ խմբակներ վերջին տարիներուն քանի մը հրապարակումներ կատարեցին Թուրքիոյ մամուլին մէջ՝ ջանալով գրաւել պատկան մարմիններու ուշադրութիւնը, նորոգել կամ գոնէ կանգուն պահել տալու համար սրբավայրը, սակայն ցարդ որեւէ նախաձեռնութիւն կատարուած չէ: Բարեբախտաբար, իր անառիկ դիրքը վանքը անմատչելի կը դարձնէ մեծաթիւ այցելուներու, հետեւաբար եւ անոնց հասցնելիք հաւանական վնասներու առջեւ:

ԺԸ դարու մայրամուտին Հ. Ղուկաս Վրդ. Ինճիճեան Վանէն մինչեւ Աղբակի Ս. Բարթողիմէոսի վանք եօթեայ ճանապարհորդութիւն մը կը նախատեսէր, բայց հիմա հոն կը հասնին շուրջ երեք ժամուան ուղեւորութենէ մը յետոյ: Իրանի ու Թուրքիոյ ճիշդ սահմանին գտնուող վանքը անցեալ տարիներուն զինուորական արգիլեալ գօտի մը ըլլալուն՝ անկարելի էր այցելել, թերեւս միայն կարելի էր զայն դիտել հեռուէն: Զինուորները քանի մը տարի առաջ լքեցին այս տարածքը եւ վանքը բացուեցաւ այցելուներու առջեւ: Երբ հասանք վանքի գտնուած բլուրի ստորոտը, տակաւին հոն էին զինուորական փշալարերը, աւազապարկերը: Անոնց քովէն կ'անցնինք զգոյշ քայլերով, կարծէք զինուոր մը տեղէ մը պիտի ելլէ յանկարծ ու կեցնէ մեզ: Կը բարձրանանք բլուրը: Հսկայ տաճարը բլուրին մէկ շարունակութիւնը ըլլալ կը թուի: Մեծ մասամբ խոնարհուած ըլլալով հանդերձ, ոչինչ կորսնցուցած է ուխտաւորները գրաւելու, անոնց իր վեհութիւնը պարտադրելու յատկութիւններէ:



Աղբակի Ս. Բարթողիմէոսի վանք

Տաճար մուտք կը գործենք պատկառելի դռնէ մը, որու կամարածեւ կրկնակ բարաւորներէն առաջինը կը ներկայացնէր զՀայր Աստուած, համաձայն Եզեկիէլի տեսիլքին, շրջապատուած առիւծներով ու հրեշտակներով շրջապատուած: Քանդակի միայն վարի մասը կանգուն է: Իսկ անոր ճիշդ վարն ալ եղծուած ըլլալով հանդերձ կը նրկատուի Ս. Բարթողիմէոս առաքեալի պատկերը, տէգն ի ձեռին մանուկները յափշտա-

կող վիշապը հալածելու պահուն:

Վանքի հիմնադիրը կը համարուի Սանատրուկ թագաւորը: Այլ աւանդութիւն մը մեզի կ'ըսէ, որ Տրդատ թագաւորի որդին է հիմնադիրը: Եւ դեռ Տրդատ թագաւոր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ալ, որոնք այցի ալ եկած են այստեղ: Թերեւս թ դարէն սկսեալ կար այս վանքը, սակայն իր մասին աւելի հաւաստի տեղեկութիւններ կը հասնին ԺԴ դարուն գրուած Ս. Գիրքի յիշատակարանէ մը:

Աղբակ գաւառի առաջնորդանիստն ալ հանդիսացող վանքին մեծագոյն սրբութիւնը Ս. Բարթողիմէոսի ծնօտի ոսկորը եղած է, ամփոփուած տապանակի մը մէջ ու թաղուած: «Այս է տապան հանգստեան սրբոյ Բարթողիմէոսի սրբազան առաքելոյ առաջին Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի» անթուակիր արձանագրութիւնը ունեցած է առաքեալին շիրիմը, որ գտնուած է առանձին մատուռի մը մէջ, որ ոչ եւս է այսօր:

Սաստիկ երկրաշարժներ, ինչպէս նաեւ Իրանի սահմանին գտնուած ըլլալու բերմամբ եղած յարձակումները, Թուրքիոյ հանրապետական կառավարութեանց հայոց մշակութային ժառանգութեան նկատմամբ որդեգրած քանդիչ քաղաքականութիւնը եւլն. պատճառ եղած են որպէսզի եկեղեցին լքուած մնայ: Տանիքը ամբողջութեամբ խոնարհուած է այսօր: Պղծուած են այն մասերը, որոնց մարդկային ձեռքեր կրցած են հասնիլ: Քիչ մը աւելի բարձր հատուածներու վրայ քանդակուած խաչերը եւ արձանագրութիւնները բարեբախտաբար մնացած են անեղծ:

ԺԹ դարավերջէն սկսեալ, ազգային-ազատագրական պայքարի բուռն շրջանին, երբ Իրանէն Վան ու հակառակ ուղղութեամբ գէնք կը տարուէր կամ հայդուկներ կ'երթան կու գային, այս վանքը եղած էր գլխաւոր կայանատեղի:

Կը շարունակենք մեր ճամբան դէպի Իրանի սահման, ուր կայ հայկական ճարտարեւանական արուեստի հնագոյն ու անգնահատելի գոհարներէն մէկը՝ **Ձորադիրի Ս. Էջսիածինը**: Ձ դար թուարկուող վանքը նախ ուշադրութիւն կը գրաւէ իր ճարտարապետական յօրինուածքով: Կարծէք հայ եկեղեցւոյ կեդրոնագմբէթ, միանաւ աւանդական հնագոյն կառուցուածքը սկզբնապէս իրմով փորձարկուած եւ յետոյ տարածում գտած ըլլայ: Գմբէթը ամբողջութեամբ թմբուկէ բաղկացած է, վեղար չունի, եթէ չհաշուենք աննկատ մնացող վերի պզտիկ ցցուածքը, որ կը ծածկէ տանիքի քառակուսի լուսամուտը: Թմբուկը շրջանակաձեւ կամ բազմանկիւն ըլլալու փոխարէն, գրեթէ քառակուսի կը թուի, մինչդեռ տաճար մուտք գործելէ ետք, կ'անդրադառնաք որ ունի ութանիստ յօրինուածք մը: Հռիփսիմէատիպ տաճարներու շարքին կրնանք դասել զայն, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ հետ: Խաչուող զոյգ կամարները կը դիմաւորեն ու անմիջապէս ձեզ կը նուաճեն, երբ ներս մտնէք: Պայտածեւ խորշերը իրարմէ անջատող փոքր կամարները՝ առագաստները, որոնք գմբէթի յենակներն են ըստ երեւոյթին, կը յենուին զոյգ մոյթերու վրայ, իսկ անոնց վրայ ալ կը հանգչի եկեղեցւոյ իւրօրինակ գմբէթը: Այսքան գողտրիկ շինուածքի մէջ ինչպէ՞ս յաջողած են ա՛յսքան խտութիւն ամփոփել... Ամէն անկիւն ապշեցուցիչ նրբութիւն մը ունի: Տաճարին վեհութիւնը իր պարզութեան մէջ է:

Կը շրջինք տաճարի շուրջը: Սրբատաշ դեղնաւուն քարեր թափած են: Արձանագրութիւն մը կը փնտռեն աչքերս: «Շնորհօք ամենակալին Աստուծոյ վերստին նորոգեցաւ Ս. Էջմիածին օժանդակութեամբ մահտեսի Սարօյին թուին ՌՃԼ» արձանագրութիւնը ատենօք զարդարած է դրան ճակատը: Բայց այսօր չկայ...



Տորադիրի Ս. Էջմիածին

Աւանդութեան համաձայն եկեղեցին Էջմիածին անունը ստացած է հոս Յիսուսի էջքը տեսած Վառվառէ կոյսի շնորհիւ: Եկեղեցւոյ մէջ պահուած է Յիսուսի թաշկինակն ու Ս. Բարթողիմէոսի գօտին:

Մէկ քանի տարի առաջ Աղբակի մէջ պատահած երկրաշարժը լսեցինք որ վնասած է արդէն իսկ աւերակի տեսք ունեցող տաճարը, սակայն ան տակաւին կը շարունակէ յուսադրել գիւղացիները, որոնք կարծելով, թէ եկած ենք ժամանակին մեր պապերուն թաղած գանձերը պեղելու, անմիջապէս կը շրջապատեն մեզ: Անպայման կ'ուզեն մեր ձեռքէն խլել այդ բոլորը... Հեռուէն սպառնացայտ աչքերով կը դիտեն մեզ, կը հետեւին մեր ամէն մէկ քայլին: Հաւանաբար իրենք կամ իրենց նախահայրերը ըլլալու են եկեղեցւոյ յատակը փոսերու վերածածները՝ հայերու թաղած ոսկիները յայտնաբերելու նպատակով: Ինչպէս ըսի վերը տեղ մը, այս ժողովուրդը զրկուած է բուն գանձը գնահատելու յատկութենէ... Այս իսկ է իրենց անէծքը:

Միսթարեան ուխտէն Հ. Համազասպ Վրդ. Ոսկան Վան-Վասպուրականի նուիրուած հատորին մէջ արձանագրուած շուրջ երեք հարիւր վանք կայ: Բոլորն ալ այսօր յանձնուած Տիրոջ ողորմածութեան, քանի որ մարդկային ձեռքը քանդելու համար միայն կը մօտենայ անոնց: Մինչդեռ այս տարածքը հնագոյն ժամանակներէ սկսեալ հարիւրամեակ մը առաջ մինչեւ հայոց ամենաբերրի արգանդն էր՝ գրչութեան, մշակոյթի, քաղաքական միտքի մեծագոյն կեդրոններէն՝ ծննդավայրը արուեստագէտներու, պատմաբաններու, եկեղեցականներու, գրողներու... Այս բերրիութեան ու առատութեան պատճառը հասկնալու համար պէտք է տեսնել Վանն ու վայելել իր անկրկնելի գեղեցկութիւնը, Հայկաբերդէն դիտել ու ըմբռնել անհուն թուացող, բայց Վանայ լիճով եզերուող Հայոց ձորի չքնաղ տեսարանը:

ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Բանասիրական գիտութիւններու թեկնածու